

Գրքեալութեր բայց չերկարի, մասնաւ


ԵՐԱՎԻ

ԳՅՈՒՂԻ

ԱՆՎԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԻՆՉԻՆԻ
ԵՎՐՈՊԱՅԻ
Բազմաժայռ
գույքան Խաղ
ՀՀՀ



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

1935

ՅԵՐԵՎԱՆԻ

~~65-A~~
6а955

338.1 20.03.2013
9-68

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСПРОДАНИЯ
Науками Нарк
СССР

I. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1
 զյուղացիները կամավոր կերպով միանում—կազմում
 ենք զյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրության
 ընդհանուր միջոցներով և կազմակերպված ընդհանուր աշ-
 խատանքով կառուցենք կոլեկտիվ, այսինքն՝ հանրային տն-
 տեսություն, ապահովենք լիակատար հաղթանակ կուլակի-
 դեմ, բոլոր շահագործողների ու աշխատավորության թշշ-
 նամիների դեմ, ապահովենք լիակատար հաղթանակ կարի-
 քի ու խավարի դեմ, մանր անհատական տնտեսության
 հետամնացության դեմ, ստեղծենք աշխատանքի բարձր ար-
 տադրողականություն և այդպիսով ապահովենք կոլտնտե-
 սականների լավագույն կյանքը:

Կոլտնտեսային ուղին՝ սոցիալիզմի ուղին միակ ճիշտ
 ուղին և աշխատավոր գյուղացիների համար: Արաելի ան-
 դամներս պարտավորվում ենք ամրացնել մեր արտելը,
 աշխատել ազնվորեն, բաժանել կոլտնտեսային յեկամուտն
 ըստ աշխատանքի, պահպանել հանրային սեփականությու-
 նը, պահպանել կոլտնտեսային ունեցվածքը, պահպանել
 արակտորներն ու մեքենաները, կազմակերպել ձիու լավ
 խնամքը, կատարել մեր բանվորացյուղացիական պետու-
 թյան առաջադրանքները և այդպիսով դարձնել մեր
 կոլտնտեսությունը բոլշևիկյան և բոլոր կոլտնտեսականնե-
 րին՝ ունենուր:

2. ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Վաչնչացվում են բոլոր միջնակները, վորոնք առաջ
 բաժանում եյին արտելի անդամների՝ հողաբաժինները և
 բոլոր դաշտային հողաբաժինները վեր են ածվում միաս-

հական հողային մասսիվի, վորը կոլեկտիվ կերպով ոգտագործում և արտելը:

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի հող ԽՍՀՄ-ում) համաժողովրդուկան պետական սեփականություն եւ Այդ հողը բանվորա-գյուղացիական պետության որենքներով ամրացվում է արտելին՝ անժամկետ ոգտագործման համար, այսինքն՝ ընդմիջության և յենթակա չե վոչ առուծախի, վոչ ել արտելի կողմից վարձու տրվելու:

Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյից արտելն ստանում եւ պետական ակտ՝ հողն անժամկետ ոգտագործելու համար: Այդ ակտում վորոշվում են արտելի ոգտագործած հողի չափն ու ճիշտ սահմանները, ընդ վորում այդ հողերի կրնատում չի թույլատրվում, այլ թույլատրվում եւ միայն ավելացնել դրանք կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին, կամ թե մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին այն պայմանով, վոր արտելի հողաշերտերի մեջ վոչ մի այլ հողաշերտ չմտնի:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման համար հանրայնացված հողերից հատկացվում եւ փոքր հողակտոր . . . հեկտարի չափ, կամ . քառ. մետր վորպես տնամերձ հողամաս (չհաշված բնակելի շենքերի բանած հողը):

3. Արտելի միասնական հողային մասսիվը վոչ մի դեպքում չպետք եւ պակասի: Արդելվում և արտելից գուրք յեկած անդամներին հող հատկացնել ի հաշիվ արտելի հողային արածության: Արտելից գուրք յեկողները կարող են հող ստանալ միմիայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից:

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստափած ցանքաշրջանառության համաձայն: Ցանքաշրջանառության դաշտերում դաշտավարական յուրաքանչյուր բրդագին մշտական հողամաս և ամրացվում ցանքաշրջանառության ամբողջ ժամանակաշրջանի համար:

Սուանձնացնել և ամբացնել անամսապահական ֆերմային . . . հեկտար հողամաս՝ ֆերմայի անապունների համար կերպույթուր ցանելու նպատակով:

3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են բոլոր բանող անասունները, պյուղատնտեսական ինվենտարը (գութանը, շարքացանը, փոցիը, կալսիչը, հնձիչը), սերմացվի պաշարները, կերի միջոցները, հանրայնացված անասունները պահպանելու համար անհրաժեշտ քանակությամբ, արտելային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղատնտեսության մթերքներ վերամշակող բարոր ձեռնարկությունները:


Զեն հանրայնացվում և մնում են կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման համար՝ բնակելի շենքերը, նրա անձնական անասուններն ու թոշունները և կոլտնտեսականի տնտեսության անձնական ոգտագործման անասունների պահպանության համար անհրաժեշտ տնտեսական շենքերը:

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայնացվելիս արտելի անդամներին մնում եւ անձնապես ոգտագործելու համար պյուղատնտեսական այն մանր ինվենտարը, վորն անհրաժեշտ և տնամերձ հողամասում կատարվելիք աշխատանքի համար:

Արտելի վարչությունն անհրաժեշտ դեպքում հանրայնացված բանող անասուններից առանձնացնում եւ մի քանի ձի կամ այլ բանող անասուն՝ արտելի անդամների անձնական կարիքները վճարով սպասարկելու համար:

Արտելը կազմակերպում ե

ֆերմաներ:



ՀՍՍՌ-ԱՐՄ.ՀՀՊ

60486.67

5. Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ՝ . . . կով, մինչև . . . զլուխ յեղջերավոր անտառնի մատղաշ . . . մայր իր ձագերով, մինչև . . . զոշխար ու այժ միասին, անստհմանափակ քանակությամբ թռչուն ու ձագար, մինչև 20 փեթակ և մեկ ձի կամ . . . եշ, կամ . . . ջորի, կամ . . . ուղտ:

4. ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է իր կոլեկտիվ տնտեսությունը վարել պլանով, ճշտիվ կատարելով բանվորա-զյուղացիական կառավարության որգանների սահմանած դյուզատնտեսական արտադրության պլանները և արտելի պարտավորությունները պետության հանդեպ:

Արտելն ընդունում է ճշտորեն կատարելու համար ցանքի, ցելի, շարամեջ մշակման, բերքահավաքի, կալմելու և աշնանավարփ պլանները, վորոնք կազմվում են կոլտանտեսությունների գրությունն ու առանձնահատկությունները հաշվի առնելով, ինչպես և անտանապահության զարգացման պետական պլանը:

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.

ա) բարձրացնել կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը, մատցնելով և պահպաննելով կանոնավոր ցանքաշրջանառություն, խորը հերկ, վոչնչտցնելով մոլախտերը, ընդարձակելով ու լով մշակելով ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական բույների շարամեջ մշակումը, ժամանակին բուկ տալով բամբակը, պարարտացնելով հողը՝ թե անամնաղանական ապրանքային ֆերմաների և թե կոլտնտեսականի անտեսության գոմաղբով, հանքային պարարտանյութերով, պայքար սղելով գյուղատնտեսական վաստակուների դեմ, ժամա-

նակին ու խնամքով հավաքելով բերքն առանց կորստի, պահպաննելով ու մաքրելով վուուղիչ կառուցումները, պահպաննելով անտառները, տնկերեցվ գաշտերը պահպանող անտառաշերտեր, խստիվ պահպաննելով տեղական հողային որդանների սահմանած ազրուելինիկական կանոնները.

բ) ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փշացումից, պահել դրանք մաքուր ողափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի ցանքերը.

գ) ընդարձակել ցանքերի տարածությունը՝ ոգտագործելով արտելի տնօրինության տակ դանշած ամբողջ հողը, բարելավելով և մշակելով բարձիթող արգած հողերը, հերկելով խոպան հողերը և կիրառելով ներկողանտեսային հողաշինարարություն.

դ) հանրային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինքնտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմացուն և արտազրության մյուս միջացները, ինչպես և այն բոլոր արակտորները, շարժիչները, կալիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, վոր բանվորա-զյուղացիական պետությունը Մեքենատրակտորային կայանների միջոցով, վորպես սպնություն, տալիս ե կոլտնտեսություններին, կազմակերպել հանրայնացված կենդանի ու մեռյալ ինքնտարի ձիւտ խնամքը՝ աշխատելով, վոր կոլեկտիվ տնտեսության մեջ լինեն.

ե) կազմակերպել անտանապահական ֆերմաներ, իսկ վորտեղ հնարավոր ե՝ նաև ձիւբուծական ֆերմաներ, ավելացնել անտառունների թիվը և բարելավել անտառունների ցեղն ու մթերատվությունը ֆերմաներում, արտենային արտադրության մեջ աղնագորեն աշխատող անդամներին ոգնություն ցույց առ կով և մանր անտառն ձեռք բերելու գործում, ցեղական բարելավված արտադրովներով սպասարկել վոչ միայն ֆերմանների անտառուններին,

այլև արտելի անդամների կողմից անձնապես ոգտագործվող անսառուններին, պահպանել սահմանված զոտեխնիկական և անառնաբուժական կանոնները.

գ) ընդարձակել կնրաբույսերի արտադրությունը, բարելավել մարդագետիններն ու արոտավայրերը, ոգնություն ցույց տալ հանրային արտադրության մեջ բարեխղճորեն աշխատող արտելի անդամներին, ապահովելով նրանց համար, վորտեղ այդ հնարավոր ե՛ կոլտնտեսային արոտավայրերից ոգտվելը, ինչպես և ըստ հնարավորության կերպարով նրանց անձնական ոգտագործման անառունների համար ի հաշիվ աշխարերի.

է) զարգացնել զյուղատնտեսական արտադրության մյուս բոլոր ճյուղերը, համաձայն տեղի բնական պայմանների, և տնայնագործական զբաղմունքները՝ համաձայն շրջանի պայմանների, պահպանել ու մաքրել գյուղատնտեսություղող լճակները, կառուցել նորերը և զարգացնել նրանց մեջ ձեռնադատները.

ը) կազմակերպել տնտեսական ու հանրային շենքերի վնարարությունը հանրային հիմունքներով.

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորակավորումը, ոժանդակել կոլտնտեսականներին՝ նրանց ըրիդավիրներ, տրակտորավարներ, կոմբայնավարներ, շոփերներ, անամնաբուժակներ ու սանիտարներ, ձիագաններ, խողապաններ, անամնապահներ, հօվիտներ, նախրապաններ, խրճիթ-լաբորատորիաների աշխատողներ պատրաստելու գործում.

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդակը, արժատայնել թերթը, գիրքը, ուսումնական կենոն, ստեղծել ակումբներ, դրագարաններ և ընթերցարաններ, ունենալ բազմիքներ, վարսավիրանոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր կայաններ գաշտում, կարգի բերել գյուղի փողոցները, փողոցներում տնկել զանազան,

առանձնապես պաղատառ ծառեր, աջակցել կոլտնտեսականներին՝ բարելավելու և զարգարելու իրենց բնակարանները.

ժա) ներգրավել կանանց կոլտնտեսային արտադրության և արտելի հասարակական կյանքի մեջ, ընդունակ և փորձածած կոլտնտեսաւհիններին առաջ քաշելով ղեկավար աշխատանքի, ըստ հնարավորության թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝ մասունքը, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով:

5. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

։ Արտելի անդամի ընդունելությունը կատարում են շնորհանուր ժողովը, վորը հաստատում եւ վարչության կողմից մտցված նոր անդամների ցուցակները:

Արտելի անդամ կարող են դանակ բոլոր աշխատավորները՝ 16 տարեկանից սկսած, ինչպես կանայք, այնպես եւ աղամարդիկ:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքներից զրկված բոլոր անձինք:

Ծանոթություն.—Այս կանոնից թույլատրվում են բացառություն անել.

ա) ձայնազուրկների այն զավակների վերաբերմանը, վորոնք մի շարք տարիների ընթացքում զրադիմած են հանրություն աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն.

բ) նախկին այն կուլակների և նրանց ընտանիքի անդամների վերաբերմանը, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլտնտեսային յեւլույթների համար, իրենց նոր բնակավայրում յերեք տարվա ընթացքում իրենց ազնիվ աշխատանքով և Խորհրդային իշխանության ձեռնարկումներին ոժանդակելով ցույց են տվել, վոր իրենք ուղղվել են:

Այն մենատնտես զյուկացիները, վորոնք արտել մըտանելուց առաջ յերկու տարվա ընթացքում վաձառել են համայնացման յինթակա իրենց ձիերը կամ այլ բանող անասունները և սերմացու չունեն, արտել են ընդունվում այն պայմանով, վոր պարտավորվեն մինչև 6 տարի ժամանակամիջոցում մասմաս մուծել ձիու կամ այլ բանող անասունի արժեքը և սերմացուն՝ ընամբերքով:

8. Անդամների վտարումն արտելից կարող ե կատարվել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորին ներկա յե արտելի անդամների ընդհանուր թվի տոնվագն յերկու յերրորդը: Արտելի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անպայման մատնանշվում և ժողովին ներկա գտնվող կուտեսեականների թիվը և վտարելու համար քի տվողների թիվը:

Այն դեպքում, յերբ արտելի անդամը խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյին բողոքում և իր վտարման դեմ, հարցը վերջնականապես լուծում և խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի նախագահությունը, արտելի վարչության նախագահի և բողոքատիրի ներկայությամբ:

6. ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Արտել մանողները պետք ե մուծեն մուտքի վճար դրամով՝ 20—40 ռուբլի յուրաքանչյուր տնտեսության համար, նայած նրանց տնտեսության կարողությանը: Մուտքի վճարները մտցվում են արտելի անբաժանելի ֆոնդի մեջ:

10. Արտելի անդամների հանրայնացված զույքի արժեքի (բանող անասուններ, ինվենտար, տնտեսական շենքեր և այլն) մի քառորդից մինչև կեսը համացվում և արտելի անբաժանելի ֆոնդին, ըստ վորում անբաժանելի հապետալին արվող հատկացման ավելի բարձր տոկոս և կիրառվում՝ ավելի ուժեղ տնտեսությունների նկատմամբ: Գույշ-

քի մասցած մասը մտցվում է արտելի անդամի փայտվմարի մեջ:

Վարչությունն արտելի կազմից դուրս յեկող անդամների հաշվիները մաքրում և նրանց փայտվմարը վերադարձնում է զրամով, ընդ վորում արտելից դուրս յեկողին կարող և հողաբաժնին տրվել միտիայն արտելի հողային տարածության սահմաններից դուրս: Հաշվետեսը, վորպես կանոն, կտարգում և տնտեսական տարին վերջանալուց հետո:

11. Արտելն իր ստացած բերքից և անասնապահության մթերքներից:

ա) կատարում ե պետության հանդեպ մթերք հանձնելու և սերմագարերը վերադարձնելու իր ունեցած պարտավորությունները, Մեքենատրակտորային կայանին ընամթերքով վճարում և Մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքի համար որենքի ուժ ունեցող կնքված պայմանագրի համաձայն, կտարգում և կոնտրակտացիայի պայմանագրերը.

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի համար և կեր՝ անառուններին կերակրելու համար, ամբողջ տարգապահանջի չափով, ինչպես և անրեցրիությունից ու կերի պակասությունից ապահովելու համար սաեղծում և անձեռնմխելի, տարեց-տարի վերականգնվող սերմի ու կերի ֆոնդ՝ տարեկան պահանջի 10—15 տոկոսի չափով:

գ) ընդհանուր ժողովի վորոշմամբ հատուկ ֆոնդ և սաեղծում հաշմանդամներին, ծերերին, ժամանակավորապես իրենց աշխատունակությունը կորցրածներին, կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին, մանկամատրներին ոգնելու և վորբերի պահպանման համար—այս բոլորը պիտի կազմի ընդհանուր արտադրանքի յերկու տոկոսից վոչ ավելին:

դ) արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշած

շափով հատկացնում ե մթերքների մի մասը՝ պետությանը, կամ շուկայում վաճառելու համար.

ե) արտելի բերքի և նրա անամսապահության մթերքների մնացած ամբողջ մասսան արտելը բաշխում ե իր անդամների մեջ՝ ըստ աշխորերի:

12. Արտելն իր ստացած զբամական յեկամուտներից՝
ա) պետությանը տալիս ե որենքով սահմանված հարկերը և ապահովագրական վճարումներ ե կատարում.

բ) անհրաժեշտ ծախսեր ե անում արտադրական լնթացիկ կարիքների համար, այն ե՝ գյուղատնտեսական գործիքների լնթացիկ նորոգումը, անասունների բուժումը, պայքար վասատուների դեմ և այլն.

գ) հոգում ե արտելի վարչատնտեսական ծախսերը այդ նպատակով հատկացնելով փողային յեկամուտների յերկու տոկոսից վոչ ավելին.

դ) միջոցներ ե հատկացնում կուլտուրական կարիքներին, այն ե՝ բրիգադիրներ և այլ կազմեր պատրաստելու, մսուրներ կազմակերպելու, ռադիո դնելու և այլն.

ե) լրացնում ե արտելի անբաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ և անասուններ գնելու, վիճանյութերի արժեքը վճարելու և գրից շինարարությանը ներգրավվող բանվորների հետ հաշիվ տեսնելու համար, Գյուղատնտեսական բանկին յերկարատև վարկերի հերթական վճարները մուծելու համար, ընդ վորում հոգուտ անբաժանելի ֆոնդի հատկացնումներ ու լրացնումներ են կատարվում արտելի զբամական յեկամուտների 10 տոկոսից մինչև վոչ ավելի քան 20 տոկոսի չափով.

զ) արտելի զբամական յեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաշխում ե իր անդամների միջին ըստ աշխորերի:

Ստացված բոլոր մուտքերն անպայման գրանցում են արտելի մուտքի մատյաններում հենց ստացվելու որբ:

Արտելի վարչությունը կազմում ե թե՛ յեկամուտների մուտքի և թե ծախսի միջոցների տարեկան նորադաշտվա-

փորն ուժի մեջ և մանում միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո:

Վարչությունը միջոցներ կարող ե ծախսել միմիայն այն հողվածների համաձայն, վորոնք նախատեսված են նախահաշվով: Վարչությանը չի թույլատրվում միջոցներն ինքնակամ կերպով փոխադրել ծախսի նախահաշվի մի հողվածից մյուսը, և միջոցները մի հողվածից մյուսը փոխադրելու համար վարչությունը պարտավոր ե ստանալ ընդհանուր ժողովի թույլտրությունը:

Արտելն իր աղաւատ միջոցները պահում ե բանկում իր ընթացիկ հաշվում, կամ ինայողական դրամարկղում: Միջոցներն ընթացիկ հաշվից զուրս են գրվում միմիայն արտելի վարչության նրամանով, վորը վավերական ե արտելի նախադադի ու հաշվապահի ստորագրությամբ:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ ՈՒ ՎԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

13. Արտելի տնտեսության բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կարգի կանոնների: Գյուղատնտեսական աշխատանքների համար վարձով ոգտագործել թույլատրվում ե միմիայն այն անվարձու ոգտագործել թույլատրվում ե միմիայն այն անձանու, վորոնք ունեն մասնագիտական գիտելիքներ և պատրաստություն (աղբոնումներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն):

Թույլատրվում ե ժամանակավոր բանվորներ վարձել միմիայն բացառիկ գեպքերում, յերբ շրապ աշխատանքները հարավոր չի կատարել պահանջված ժամկետին՝ արտելի անդամների տոկա ուժերով նրանց լիակատար ծանրաբեռնության գեպքում, ինչպես և շինարարական աշխատանքների համար:

14. Վարչությունը արտելի անդամներից ստեղծում ե արտադրական բրիգադներ:

Դաշտավարական բրիգադներ են կազմվում առնվազն
լիակատար ցանքաշրջանառության ժամանակի համար:

Դաշտավարական բրիգադին հողամասեր են հատկաց-
վում ցանքաշրջանառության գաշտերում՝ ցանքաշրջանա-
ռության ժամանակաշրջանի համար:

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կոլտըն-
տեսության վարչությունը հատուկ արձանագրությամբ
ամրացնում ե նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բա-
նող անառունները և անտեսական շենքերը:

Անասնապահական բրիգադները կազմվում են ամսը-
վազն յերեք տարի ժամանակով:

Արտելի վարչությունն անասնապահական բրիգադին
ամրացնում ե սթերատու անտառները, սպասարկման
համար անհրաժեշտ ինվենտարն ու քաշող ուժն ե անառ-
նապահական շենքերը:

Արտելի անգամների մեջ աշխատանքը բաժանում ե
անմիջականորեն բրիգադիրը, փորը պարտավոր ե լավա-
գույն ձեռվ ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կող-
անտեսականին, թույլ չտալով վոչ մի խնամիություն և ըն-
տանեկանություն՝ աշխատանքը բաշխելիս, և խստիվ հաշ-
վի առնելով ամեն մեկի աշխատանքային վորակավորումը,
փորձն ու ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և ծծմայ-
րերի նկատմամբ՝ նրանց աշխատանքը թեթևացնելու ան-
հրաժեշտությունը, աղատելով նրանց աշխատանքից ծննդա-
բերությունից մի ամիս առաջ և ծննդաբերությունից
մի ամիս հետո, պահպանելով այդ յերկու ամսավա համար
նրանց հասանելիքը՝ նրանց աշխորերի միջին վաստակի
կիսի չափով:

15. Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում
են գործարձի հիման վրա:

Արտելի վարչությունը մշակում ե, և կոլտնտեսական-
ների ընդհանուր ժողովը հաստատում բոլոր գյուղատն-
տեսական աշխատանքների պլանը, արտադրանքի նորմա-
ները և յուրաքանչյուր աշխատանքի գնահատումներն աշ-
խորելով:

Յուրաքանչյուր աշխատանքի համար սահմանվում են
բարեխղճորեն աշխատառ կոլտնտեսականի մատչելի ար-
տադրանքի նորմաներ, հաշվի առնելով բանող անառուննե-
րի, մեքենաների ու հողի գրությունը: Յուրաքանչյուր աշ-
խատանք, որինակ՝ մի հեկտարի վարը, մի հեկտար բամ-
բակի ցանքը, մի տոնն հացահատիկի կալումը, մի ցենտ-
ներ ճակնդեղի հանումը, մի հեկտար վուշի գզելը, մի
հեկտար վուշի թրջոցը, մի լիտր կաթ կթելը, և այլն, զնա-
հատվում ե աշխատերով նայած աշխատողից պահանջվող
վորակավորմանը, աշխատանքի բարդությանը, դժվարու-
թյանը և արտելի համար ունեցած կարեսրությանը: Բրի-
գադիրն առնվազն շաբաթը մեկ տնօամ հաշվում ե արտե-
լի յուրաքանչյուր անդամի կատարած ամբողջ աշխատան-
քը և, սահմանված գնահատումների համաձայն, կոլտնտեսա-
կանի աշխատանքային գրքույկում գրանցում ե նրա վաս-
տակած աշխորերի քանակը:

Արտելի վարչությունն ամիսը մեկ անգամ կախում է
արտելի անդամների ցուցակը, մատնանշելով նախորդ ամ-
սում նրանց վաստակած աշխորերի քանակը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի տարե-
կան արդյունքը և յեկամուտը, բացի հաշվետարից, ան-
պայման հաստատվում ե բրիգադիրի և արտելի նախա-
դահի կողմից: Արտելի յուրաքանչյուր անգամի վաստա-
կած աշխորերի ցուցակը կախվում ե ի գիտություն բոլորի,
արտելի յեկամուտների բաշխումը հաստատող ընդհանուր
ժողովից ամենաուշը յերկու շբաթ առաջ:

Եթե գաշտավարական բրիգադը, լավ աշխատանքի
չնորհիվ, իրեն ամբացված հողամասից ստանում ե միջին
կոլտնտեսայինից բարձր բերք և կամ անասնապահական
բրիգադը լավ աշխատանքի չնորհիվ ապահովում ե կովերի
պվելի բարձր կաթնատպությունը, անառունների ավելի
գիրությունը և մատղաշների լիակատար պահպանումը,

ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամտի վրա հավելումներ և անում նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աշքի ընկող հարվածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադիրին և Փերմայի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով:

Յեթե գաշտավարական բրիգադը վատ աշխատանքի պատճառով իրեն ամրացված հողամասերից հավաքում և միջին կոլտնտեսայինից ցածր բերք, կամ կոլտնտեսային անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով ատլիս և միջակից ցածր կաթնատվություն, անասունների դիրություն և մատղաշի պահպանում, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուտներից պահումներ և կատարում նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով:

Արտելի յեկամուտների բաշխումն անդամների միջև կատարվում և բացառապես արտելի յուրաքանչյուր անգամի վաստակած աշխորերի քանակի համաձայն:

16. Տարկա ընթացքում արտելի անդամին կարելի յե զրամական ավանուտալ վոչ ավելի, քան աշխատանքի համար նրան համառ գումարի 50 տոկոսի չափով:

Վարչությունն արտելի անդամներին քնավճարով ավանս և տալիս հացահատիկը կալսելու սկզբից՝ կոլտնտեսության ներքին կարիքներին հատկացված 10—15 տոկոկալոված հացահատիկից:

Տեխնիկական մշակույթների ցանքով զբաղվող արտելում արտելի անդամին դրամական յեկամուտը վճարվում և առանց սպասելու, վոր վերջանա բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի, թեյի, ծխախոտի հանձնումը պետությանը, այլ հանձնելուն դուզընթաց, առնվազն շաբաթը մի անգամ՝ հանձնված արտազրանքի համար արտելի ստացած դրամի 60 տոկոսի չափով:

17. Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստիվ պահպաննելի իրենց կոլտնտեսային սեփականությունը և կոլտնտեսային դաշտերում աշխատող պետական մեջենաները, աշխատել ազնվորեն, յենթարկվել կանոնադրության պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչության վորոշումներին, պահպաննելներին կարգի կանոնները, ճշտիվ կատարել վարչության և բրիգադիրի կողմից նրանց հանձնարարված աշխատանքը և հասարակական պարտականությունները, խստիվ պահպաննել աշխատանքի կարգադրությունը:

Հանրային գույքին անտեսեսուրեն ու անսրտացավ վերաբերվելու համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի դուրս շդալու, վատորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու կանոնադրության այլ խախտումներ կատարելու համար, վարչությունը մեղավորներին տուժի յե ընթարկում ներքին կարգի կանոնների համաձայն. որինակ՝ կրկին կատարել տալ վատորակ կատարված աշխատանքը, առանց աշխորերը հաշվելու, նախազգուշացում, հանդիմանություն անել, պարապահնքի յենթարկել ընդհանուր ժողովում, բարձրացնել սև տախտակին, տուզանել մինչև հինգ աշխորի չափով, փոխազրել ցածր աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից:

Այս դեպքերում, յերբ գաստիարակելու և պատճենու համար արտելի ձեռք առած բոլոր միջոցները չեն ներդրում, վարչությունն ընդհանուր ժողովում դիում և արտելի անուղղելի անդամներին արտելից վատարելու հարցը:

Վատարումը կատարվում և զյուզտատնական աշտելի կանոնադրության 8-րդ կետում սահմանված կարգով:

18. Հանրային, կոլտնտեսային և պետական սեփականության ամեն մի հավշտակում, դեպի արտելի դույրն ու անասունները հետեւատրակտորային կայանների մեջենաները ցույց տրվող ամեն մի վատարակական վերաբերմունք արտելը դիտում և վորպես դավանանություն՝ կոլ-

անտեսության ընդհանուր գործին, և ոգնություն՝ ժողովրդի
թշնամիներին:

Կոլտնտեսային կարգերի հիմունքներն այդպիս հան-
ցափոր կերպով խախտելու համար մեղավոր անձինք ար-
տելի կողմից դատի յեն տրվում բանվորա-գյուղացիական
պետության որենքների ամբողջ խստությամբ՝ նրանց պատ-
ժելու համար:

Յ. ԱՐԵԼԻ ԳՐԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը կառավարում ե արտելի անդամ-
ների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջև ընկած ժա-
մանակամիջոցում ընդհանուր ժողովի ընտրած վարչու-
թյունը:

20. Ընդհանուր ժողովն արտելի կառավարման բարձ-
րագույն որդանն ե:

Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում ե արտելի նախագահ և արտելի վարչու-
թյուն՝ ինչպես և արտելի վերստուգիչ հանձնաժողով, ընդ-
զորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում ե խոր-
հուրդների շրջանային գործադիր կամիստեյի կողմից.

բ) կատարում ե նոր անդամների ընդունելությունը
և անդամների վտարումն արտելի կազմից.

գ) հաստատում ե տարեկան արտադրական պլանը,
մռարքի ու յելքի նախահաշվը, շինարարության պլանը,
արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխ-
որելով.

դ) հաստատում ե Մեքենատրակտորային կայանի հետ
կնքվող պայմանագիրը.

ե) հաստատում ե վարչության տարեկան հաշվետվու-
թյունը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր յեղա-
կացության հետ միասին, ինչպես և վարչության հաշվե-
տվագությունները գյուղատնտեսական կարևորագույն կամ-
պանիաների վերաբերմամբ.

դ) հաստատում ե գանադան ֆոնդերի չափը և աշխ-
որի համար տրվելիք մթերքի ու զրամի քանակը.

է) հաստատում ե արտելի ներքին կարգի կանոնները:
Կանոնադրության այս կետում թվարկված բոլոր հար-
ցերի վերաբերմամբ արտելի վարչության ընդունած վորո-
րոշումներն անվավեր են, առանց ընդհանուր ժողովի հաս-
տատման:

Ընդհանուր ժողովը, արտելի անդամների ընդհանուր
թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում, որինական
և բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչու-
թյան ու նախագահի ընտրության հարցից, արտելի կազ-
մից վտարներու հարցից և զանազան ֆոնդերի չափին վե-
րաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ
ե, վոր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների
ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը:

Ընդհանուր ժողովը վորոշումներ և ընդունում ձայների
մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

21. Արտելի գործերը վարելու համար արտելի ան-
դամների ընդհանուր ժողովը յերկու տարի ժամանակով ընտ-
րում ե վարչությունն հոգի կազմով:

Արտելի վարչությունն արտելի գործադիր որդանն ե
և արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ պատա-
խանատու յե արտելի աշխատանքի համար, և պետու-
թյան հանդեպ՝ արտելի պարտավորությունների կատար-
ման համար:

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքի ամե-
նորյա ղեկավարության, ինչպես և վարչության վորոշում-
ների կատարման ամենորյա ստուգման համար արտելի
ընդհանուր ժողովն արտելի նախագահ, վորը
միևնույն ժամանակ հանդիսանում ե վարչության նա-
խագահը:

Նախագահը պարտավոր ե վարչության նիստ գու-
մարել ամսական առնվազն յերկու անգամ՝ ընթացիկ գոր-

ծերը քննարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար:

Վարչությունը, նախադահին սգնելու համար, վարչության անդամներից ընտրում և նախադահի տեղակալ, նախադահի առաջադրությամբ:

Նախադահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում է նախադահի ցուցումներին:

23. Անասնապահական ֆերմաների բրիգադիներին ու վարիչներին նշանակում և արտելի վարչությունը, առնվազն յերկու տարի ժամանակով:

24. Հաշվապահությունը վարելու և գույքի հաշվառում կատարելու համար, վարչությունն արտելի անդամներից ընտրում կամ վարձով հրամիրում և հաշվապահ Հաշվապահը վարում է հաշվապահությունը և հաշվարկումը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում և արտելի վարչությանն ու նրա նախադահին:

Հաշվապահին վոչ մի իրավունք չի արվում ինքնակամ տնօրինել արտելի միջոցները, ավանսներ տալ և ծախսել ընամթերքի ֆոնդերը: Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտելի վարչությանը և նախադահին: Արտելի ծախսի դրամական փաստաթղթերն ստորագրում են, բացի հաշվապահից, նաև արտելի նախադահը, կամ նրա տեղակալը:

25. Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում և վարչության տնտեսական - ֆինանսական ամբողջ գործունեյությունը, ստուգում և թե դրամի ու բնամթերքի մոււքերն արդյոք սահմանված կարգով մուտք արված են արտելում, արդյոք պահպանվել և միջոցները ծախսելու՝ կանոնադրությամբ նախատեսված կարգը, բավարար հոգատարությամբ պահպանվում և արդյոք արտելի գույքը, չկմն արդյոք արտելի գույքի և դրամական միջոցների հավատակումներ ու փառնումներ, ինչպես և կատարում արդյոք արտելն իր պարտավորությունները պետության հանդեպ, ինչպես և

վճարում իր պարտքերը և ինչպես և գանձում իր ստանալիքներն արտելի պարտապահներից:

Դրա հետ միասին, վերստուգիչ հանձնաժողովը մանրազնին ստուգում և արտելի բոլոր հաշվներն իր անդամների հետ, յերևան և բերում թերահաշվի, աշխատելիք վոչ ճիշտ գրանցման, աշխարերի հաշվները ժամանակին չտեսնելու ամեն մի գեպը և արտելի ու նրա անդամների շահերի խախտման այլ գեպերը:

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում և կատարում տարեկան 4 անգամ: Վերստուգիչ հանձնաժողովը վարչության կողմից ընդհանուր ժողովին ներկայացվող տարեկան հաշվետվության առթիվ տալիս և իր յեղացությունը, վորն ընդհանուր ժողովը լսում և վարչության հաշվետվությունից անմիջապես հետո: Վերստուգում արձանագրությունը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեյության համար հաշվետու յե արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ:

Սույն կանոնադրությունն ընդունված և արտելի 1935 թվի _____ կայացած ընդհանուր ժողովի կողմից, վորին մասնակցում ելին արտելի անդամ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԴԱՀ

(Ստորագրություն)

ՔԱՐՏՈՒՂԱՐ


(Ստորագրություն)

1935 թ.

Պարտներ
ուղարկած
ԿԵՐԵ







Սբագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիսի լիազոր № 9-72.

Նբառ. № 192

պատվեր № 162

տիրաժ 3000

Հանձնվել է արտադրության 1935 թ. մարտի 5-ին
Առողջապահ և ապահպելու 1935 թ. մարտի 10-ին

Գյուղելուատի տպարան, Յերևան, Նալբանդյան 50.

ՀՀ Ազգային գրադարան



NL0204830

29446

4

C 35
295

VM

1
2